ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ծրագրի հերթական համարը	Գործողությունների անվանումները	Գործողությունների իրականացման արդյունքները	Ժամկետ	Ծանոթագրություն
1	2	3	4	5
Ռազմավարական նպատակ 1. Քաղաքականությունների մշակման և իրականացման փաստահենք ու արդյունքամետ համակարգի կայացում				
1.1. Ռազմավարական պլանավորման համակարգի բարելավում				
1.	Ռազմավարական պլանավորման շրջանակի ու մեթոդաբանության վերանայում, ներառյալ՝ ձևաչափերի ու ուղեցույցների մշակում	Կառավարության աշխատակարգում կատարված փոփոխությամբ ու լրացմամբ վերանայվել է ռազմավարական պլանավորման շրջանակն ու մեթոդաբանությունը: Մշակվել է Կառավության ռազմավարական կառավարման աշխատակարգը, որը ներկայացնում է 6 ոլորտային ռազմավարությունները ու դրանց մշակման և մոնիթորինգի տրամաբանությունն ու ընթացակարգերը:	2025 թ. սեպտեմբեր	
2.	Ռազմավարական պլանավորման թվային համակարգի մշակում, ներդրում ու գործարկում, ներառյալ՝	Ռազմավարական պլանավորման թվային համակարգերի մշակման նպատակով կազմված տեխնիկական բնութագրի հիման վրա 2025թ.	2025 թ. սեպտեմբեր	

	մշտադիտարկման ու գնահատման մոդուլները	հայտարարվել էր մրցույթ, որի արդյունքով հաղթող է ճանաչվել հունգարական AAM ընկերությունը: Վերջինիս հետ պայմանագրի կնքման աշխատանքների վերջնականացման փուլն է ընթանում: Ներկայումս ընկերությունը մշակում է թվային համակարգի ներդրման և գործարկման հայեցակարգը: Համակարգի գործարկման նպատակով իրականացվելիք աշխատանքները կմեկնարկեն 2026թ. 2-րդ եռամսյակում: Մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա շուկայից ձեռք կբերվի սահմանված պարամետրերին համապատասխանող ծրագրային լուծում:		
3.	Ռազմավարական պլանավորման ինստիտուցիոնալ կառուցակարգերի վերանայում ու փորձարկում, այդ թվում՝ աշխատանքային ճկուն ու նորարարական ընթացակարգերի միջոցով	ՏՀԶԿ/ԵՄ ՍԻԳՄԱ նախաձեռնության աջակցությամբ իրականացվել է ռազմավարական պլանավորման գործառույթի ֆունկցիոնալ վերանայում: Ներկայումս մշակվող Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության ներքո քննարկվում է ինստիտուցիոնալ ու ֆունկցիոնալ նոր շրջանակ ներդնելու առաջարկը: Զուգահեռ, խորհրդատվական կազմակերպության ներգրավմամբ	2025 թ. դեկտեմբեր	

		մշակվում է պետական կառավարման համակարգում նախագծային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը:		
4.	Ռազմավարական պլանավորման գործընթացներում ներգրավված անձնակազմի կարողությունների զարգացում	Ռազմավարական պլանավորման գործընթացներում ներգրավված անձանց համար շարունակաբար իրականացվում են կարողությունների զարգացման աշխատարաններ: Ներկայումս դասընթացները մատուցվում են ինչպես Համաշխարհային բանկի փորձագետների, այնպես էլ նախագծերի կառավարման փորձագետի կողմից:	2025 թ. դեկտեմբեր	
Ռազմավարական նպատակ 2. Հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում				
5.	Կյանքի փորձառությունների սկզբունքի վրա հիմնված ծառայությունների վերակառուցում՝ առաջնահերթություն տալով ընտրված 12 փորձառություններին (ըստ հրապարակված պլանի), և ինտեգրում Հայաստանի ծառայությունների ազգային հարթակին	Ծրագրի շրջանակը և իրականացման ուղեցույցը հաստատվել է 27. 06. 2025 թվականին: Ընթացքի մեջ են թվային ծառայությունների օպտիմալացմանն ուղղված պետական մարմինների հետ աշխատանքները:	2025 թ. դեկտեմբեր	

6.	Թվային համակարգերի կիբեռ-անվտանգության չափանիշների սահմանում և լիարժեք գործարկում	Կիբեռանվտանգության մասին օրենքը ընդունվել է 04. 12. 2025 թվականին: Օրենքի ընդունման ժամկետով պայմանավորված ենթաօրենսդրական ակտերի մշակման համար սահմանվել է նոր վերջնաժամկետ՝ մինչև 30. 12. 2026 թ:	2025 թ. դեկտեմբեր	
7.	Պետական հիմնական տեղեկատվական ռեգիստրների արդիականացում և փոխգործելիության ապահովում՝ համաձայն հանրային տեղեկատվության մասին օրենսդրության պահանջների	Բնակչության պետական ռեգիստրի մասին օրենքը ընդունվել է 03. 07. 2025թ. Հանրային տեղեկությունների մասին օրենքն ընդունվել է 04.12.2025 թ. : Փոխգործելիության համակարգը ներդրված է: Օրենքների ընդունման ժամկետներով պայմանավորված՝ ռեգիստրների արդիականացման աշխատանքների համար սահմանվել է նոր վերջնաժամկետ մինչև 30. 12. 2026:	2025 թ. դեկտեմբեր	
8.	Կյանքի փորձառություններից դուրս մնացած ծառայությունների ուսումնասիրություն՝ մատուցման նպատակահարմարության ու ձևի որոշման նպատակով	**Կատարված է:**	2025 թ. դեկտեմբեր	
Ռազմավարական նպատակ 3. Գործադիր իշխանության մարմինների ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացում				

3.	Պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս սպասարկող այլ կազմակերպությունների գործառութային վերլուծություն և դրանից բխող կառուցվածքային փոփոխությունների իրականացում	Պետական կառավարման համակարգի մարմինների կազմակերպական տիպի որոշման միասնական մեթոդաբանությունը մշակված է, որը պետական կառավարման համակարգի մարմինների գործառութային վերլուծության մեթոդաբանության հետ հիմք է հանդիսանալու 2026 թվականի 2-րդ կիսամյակում կառավարման մարմինների ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ վերանայումների համար:	2025 թ. նոյեմբեր	Հաշվի առնելով, որ պետական կառավարման համակարգի մարմինների կառուցվածքային վերանայումները պայմանավորված են գործունեության առաջնահերթություններով, դրա հիմքով վերանայումները նախատեսվում է իրականացնել Կառավարության՝ 2026-2031թթ. ծրագրային առաջնահերթությունների սահմանմանը զուգահեռ:
Ռազմավարական նպատակ 4. Հանրային ծառայության մրցունակության բարձրացում				
4.1. Հանրային ծառայության տեսակների ու պաշտոնների դասակարգման լավարկում				
1.	Պետական կառավարման համակարգի մարմինների անձնակազմի գործառույթների վերլուծություն ու արդիականացում	Կատարողականի նոր համակարգի ներդրման աշխատանքների իրականացման շրջանակներում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության	2025 թ. դեկտեմբեր	

		գրասենյակի կողմից մշակվել են ընդհանրական և ընտրանքային կոմպետենցիաները, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ՀՀ 1-ին փոխվարչապետի՝ 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ, ինչը էական դրական ազդեցություն կունենա քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգի վրա: Մշակված կոմպետենցիաները նկարագրում են յուրաքանչյուր պաշտոն զբաղեցնողի համար պահանջվող վարքագիծը՝ սերտորեն կապելով այն համապատասխան գործառույթների իրականացման, արդյունքների ստուգման, վերահսկման և դրանց նկատմամբ պատասխանատվության հետ: Գործառութային վերլուծության մեթոդաբանության կիրառման արդյունքում գործառույթների հստակեցումը հնարավորություն կտա ձևավորել տվյալ պաշտոնին առավել համապատասխան, թիրախային և կիրառելի կոմպետենցիաներ:		

		Միաժամանակ, Հանրային ծառայության համակարգի բարելավման նպատակով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ պարզեցվել է ներքին մրցույթի ընթացակարգը, ընդլայնվել են կատարողականի գնահատման հիմքով առաջխաղացման հնարավորությունները, ճշգրտվել են մրցույթի հայտարարման և փորձնակների ներգրավման կարգավորումները, նախատեսվել են կարգապահական պատասխանատվության և էթիկայի հանձնաժողովի գործունեության կատարելագործման դրույթներ, ինչպես նաև վերանայվել են մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների թվայնացմանն ուղղված ենթաօրենսդրական կարգավորումները:		

4.2. Պետական հատվածում ֆինանսական շահադրդման համակարգի լավարկում				
1.	Հանրային ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համակարգի վերանայում	Պետական կառավարման համակարգի առանձին մարմինների կատարողականի գնահատման պիլոտային կարգը հաստատվել է Կառավարության՝ 2025թ. նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշմամբ: Մասնավորապես՝ որոշմամբ պիլոտավորել է նոր չափորոշիչների հիման վրա պարգևատրման համակարգ, որը նպատակ ունի Կառավարության ծրագրով և ռազմավարություններով սահմանված նպատակների և խնդիրների իրականացման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածի համար առանձնացված առաջնահերթ անելիքների կատարողականի գնահատումների միջոցով նպաստել պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի հիմնական սկզբունքը բարձր կատարողականի համար աշխատակիցների նյութական խրախուսումն է՝ որպես համակարգի արտադրողականության աճը երաշխավորող գործոն:	2025 թ. դեկտեմբեր	

		Պարգևատրման լրացուցիչ համակարգի պիլոտավորման արդյունքում նախատեսվում է վերլուծել գրանցած արդյունքները և վերջնականացնել հանրային ծառայողների վարձատրության համակարգի բովանդակությունը՝ վարձատրության գործող համակարգը 2026թ. ընթացքում վերանայելու նպատակով:		
Ռազմավարական նպատակ 5. Մասնակցային կառավարման համակարգի կայացում ու հանրության հետ արդյունավետ ու թիրախային հաղորդակցության ապահովում				
5.1. Քաղաքականությունների մշակման գործընթացում հանրային մասնակցության խթանում				
3.	Մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների, կարգավորումների և մեխանիզմների բարելավում, այդ թվում՝ մասնակցության ապահովման ուղեցույցների մշակում	**1. Քարտեզագրվել են Հայաստանում մասնակցային կառավարման գործող գործիքները:** Մասնավորապես ուսումնասիրվել են www.edraft.am իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման հարթակը և **https://հանրագիր.ամ** էլեկտրոնային հանրագրերի հարթակը: Դիտարկման առարկա են հանդիսացել ոչ միայն կիրառվող թվային լուծումները, այլև հանրության մասնակցության հետ կապված առկա խնդիրները, ինչպես նաև համապատասխան իրավական	2025 թ. դեկտեմբեր	

		կարգավորումները: **1.1.** www.edraft.am հարթակի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ անցկացված հանդիպումների արդյունքում նախատեսվում է, ի թիվս այլ բարելավումների, ներդնել **մասնագիտական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների շտեմարան (ոլորտային բազա)**՝ նպատակ ունենալով ապահովել իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին ավելի թիրախավորված և բովանդակային մասնակցություն: Միաժամանակ, վերլուծության է ենթարկվել www.edraft.am հարթակի վիճակագրության բաժինը, որի արդյունքներով առաջարկություններ են ներկայացվել **ՀՀ արդարադատության նախարարությանը**՝ հարթակի վիճակագրական գործիքների և ցուցիչների բարելավման ուղղությամբ: Վիճակագրության կատարելագործումը հնարավորություն կտա ձևավորելու		

		ավելի հստակ և համադրելի պատկեր իրավական ակտերի նախագծերի շուրջ հանրային մասնակցության դինամիկայի, ներգրավվածության մակարդակի և միտումների վերաբերյալ, ինչպես նաև կծառայի որպես ապացուցողական հիմք մասնակցային քաղաքականությունների հետագա բարելավման համար: Հարթակի շրջանակներում նաև նախատեսվում է ՔՀԿ-ների և փորձագետների ոլորտային ցանկերի/ բազաների ձևավորումը: Ինչը նշանակում է, որ ոչ պետական շահագրգիռ կողմերը կամավոր կընտրեն ոլորտներ՝ դեմ առ դեմ քննարկումներին մասնակցելու համար: Այս գործիքը հնարավորություն կտա պետական մարմիններին հենց համակարգից հրավիրելու հետաքրքրված կազմակերպություններին և փորձագետներին հանրային լսումների կամ քննարկումներին մասնակցելու համար: **1.2. հանրագիր.ամ** հարթակի շուրջ		

		քննարկումները իրականացվել են հանրագրերի ինստիտուտի վերանայման շրջանակներում: Արդյունքում գույքագրվել են մի շարք խնդիրներ՝ կապված հանրագրի **ձևի և բովանդակության որոշակիության**, **հանրագիր ներկայացնողի նույնականացման մեխանիզմների**, ինչպես նաև **պետական համակարգում հանրագրերի հետ աշխատանքի համար պատասխանատու սուբյեկտների և համապատասխան թվային լուծումների** հետ: **2. Մշակվել և ներդրվել են նախարարին և ՀՀ կառավարության ենթակա մարմնի ղեկավարին կից հասարակական խորհրդի ձևավորման կարգը և աշխատակարգը:** Տվյալ կարգավորումը սահմանում է հասարակական խորհուրդների ձևավորման և գործունեության միասնական շրջանակը՝ նպատակ ունենալով ապահովել **քաղաքացիական մասնակցությունը**		

		քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում: Կարգավորումը մասնավորապես սահմանում է՝ • հասարակական խորհուրդների ստեղծման հիմքերը, • կազմի ձևավորման սկզբունքները (ՔՀԿ-ների, շահառուների և ոլորտային փորձագետների ներգրավում), • աշխատակարգը (նիստերի գումարման կարգ, օրակարգի ձևավորում, արձանագրում), • խորհրդի և համապատասխան մարմնի միջև խորհրդատվական փոխգործակցության ձևաչափերը, • նոր նախագծերի, կամ գաղափարների պարտադիր քննարկումը խորհուրդներում, • առաջարկների ներկայացման, քննարկման և արձագանքման մեխանիզմները: Կարգավորումը **չի սահմանափակվում միայն քաղաքականություն մշակող**		

		նախարարություններով, այլ տարածվում է նաև ՀՀ կառավարության երեք ենթակա մարմինների վրա՝ **Քաղաքաշինության կոմիտե, Պետական եկամուտների կոմիտե և Կադաստրի կոմիտե**: Միաժամանակ, պայմանավորվածություն է ձեռք բերվել **Շվեդիայի կառավարության Ֆոլկ Բերնադոտ ակադեմիայի (ՖԲԱ)** հետ՝ մշակելու **կարողությունների զարգացման մոդուլներ** հասարակական խորհուրդների գործունեության համար պատասխանատու և համակարգող պաշտոնատար անձանց համար: Դասընթացները կայացել է **2026 թվականի հունվարի, փետրվար և մարտ ամիսներին**: **3. ՀՀ ռազմավարական կառավարման համակարգում բաց կառավարման մեյնսթրիմինգը ներառվել է որպես համակարգային բաղադրիչ:** Այն դիտարկվում է ոչ թե որպես առանձին նախաձեռնություն, այլ որպես		

		ռազմավարական պլանավորման, քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման ամբողջական ցիկլի խաչաձև սկզբունք, որը պետք է ինտեգրվի ոլորտային և գերատեսչական ռազմավարություններում, ծրագրերում և գործողությունների պլաններում: Մեյնսթրիմինգի շրջանակում սահմանվել են **չափելի ուղղություններ և ցուցիչներ**, որոնք վերաբերում են՝ • հանրային մասնակցության մեխանիզմների կիրառմանը, • շահագրգիռ կողմերի վաղ և իմաստալից ներգրավմանը, • բաց տվյալների և թափանցիկության գործիքների օգտագործմանը, • հետադարձ կապի (feedback loop) ապահովմանը և առաջարկների հաշվառման մակարդակին:		
5.2. Կառավարության ռազմավարական հաղորդակցության բարելավում				

1.	Ռազմավարական հաղորդակցության հաղորդակարգերի մշակում և ներդնում	Մշակվել են «ստանդարտ» և «ճգնաժամային» իրավիճակների հաղորդակարգերը: Հաղորդակարգերի ներդնում է նախատեսվում է 2026թ. ընթացքում:	2025 թ. նոյեմբեր	
3.	Ռազմավարական հաղորդակցության կառավարման ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ ճարտարապետության ներդնում	Մշակվել է իրականացման անցումային (տրանզիցիոն) պլանը և ներկայացվել է համաձայնեցման: Ռազմավարական հաղորդակցության կառավարման ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ ճարտարապետության ներդնում է նախատեսվում 2026թ. ընթացքում:	2025թ. դեկտեմբեր	
4.	Ռազմավարական հաղորդակցության ոլորտում պետական հատվածի կարողությունների հզորացում, ներառյալ՝ անձնակազմի ու պահանջվող տեխնիկական վերազինման մասով	Իրականացվել է 5 դասընթաց պետական կառավարման համակարգի մարմինների խոսնակների համար:	2025թ. դեկտեմբեր	
5.	ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության համատեղ մշակված ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգի ներդրման ճանապարհային քարտեզի ընդունում և պետություն-մասնավոր հատված-	2025թ. -ին «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024–2026թթ. հայեցակարգի» շրջանակում իրականացվել են պետական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի	2025թ. դեկտեմբեր	

	քաղաքացիական հասարակություն համագործակցությամբ նախանշված միջոցառումների իրականացում	համատեղ գործողություններ: Ուժեղացվել են պետական կառույցների ռազմավարական և ճգնաժամային հաղորդակցության կարողությունները, մշակվել են հաղորդակարգեր : Ընդլայնվել է համագործակցությունը ԶԼՄ-ների, փաստերի ստուգման հարթակների, բջջային օպերատորների և միջազգային գործընկերների հետ: Իրականացվել են լայնածավալ հանրային իրազեկման ծրագրեր և հաղորդումներ: Արտակարգ իրավիճակներում ապահովվել է օպերատիվ ու վստահելի տեղեկատվության տարածում: Մեծ ուշադրություն է դարձվել մեդիագրագիտության զարգացմանը՝ դպրոցներում, նախադպրոցական հաստատություններում, բուհերում և գրադարաններում: Վերապատրաստվել են հազարավոր ուսուցիչներ և ձևավորվել մենթորական ցանցեր: Իրականացվել են հետազոտություններ ուսուցիչների և սովորողների մեդիա կարողությունների վերաբերյալ: Երիտասարդների, ծնողների և		

		համայնքների համար իրականացվել են կրթական և իրազեկման ծրագրեր:		